

**VIRGINIA-ELENA SPENGLIAN
TAMARA & GARBIS SPENGLIAN
SOFIA, HUGAS LUCA, VARTAN, KEVORK, VARTANIC, CARAPET
EMILIA, ANA, HAGOP, DIRAMAIR, MAIRENI, HAGI-DUDU,
HARUTIUN, PARIS, BEDROS, LEVON, KERANUSH, MADONA,
LUCICA, FLORICA, CASPAR, NUBAR, LILIANA, LILICA, GIGI,
LUCRETIA, NICHLAS, & OTILIA**
Requested by: Der Hayr and Board of Trustees
Harry Spengian

AZNIV DANDALIAN (2nd Anniversary)
KARNIG & SEZA KOUYOUMJIAN
LEVON & ASDGHIG KOULLOUKIAN
Requested by: Der Hayr and Board of Trustees
Gabriel & Gilda Karpouzian
Raffi Karpouzian
Lareine Karpouzian-Matas

SARKIS DONABEDIAN (France) (1st Anniversary)
MIHRAN KELESHIAN (19th Anniversary)
AGHAVNI KELESHIAN (21st Anniversary)
BERJOUHI KELESHIAN (17th Anniversary)
KELESHIAN AND KRIKORIAN FAMILY MEMBERS
Requested by Der Hayr and Board of Trustees
Der Sarkis and Yn. Maggie Aktavoukian
Sako and Shoghag Aktavoukian

🌀 🌀
2021 FEASTS

- October 24 Discovery of the Cross
- November 6 Holy Archangels Gabriel & Michael
- November 20 Feast of All Saints
- December 4 Saint Thaddeus and Saint Bartholomew
- December 18 Saint Hagop (James) of Nisibis
- December 23 Saints David the Prophet & Holy Apostle James
- December 25 Saint Stephen the Protomartyr
- December 27 Saints Peter and Saint Paul
- December 28 The Holy Apostle James & John the Evangelist

**Ս. ԽԱՉ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
SOORP KHATCH ARMENIAN
APOSTOLIC CHURCH**

🌀 SUNDAY, OCTOBER 17, 2021 🌀



ՉԱՅՆ ԳՉ

**ԽԱՉՎԵՐԱՅԷՆ ԵՏՔ Ե. ԿԻՐԱԿԻ
FIFTH SUNDAY AFTER THE EXALTATION**

«ՀԱՍՏԱՍԵՂ ՀԱՅ ԳՊՐՈՑ»Ի
ՅԱՏՈՒԿ ԺԱՍԵՐԳՈՒԹԻՒՆ 9:30-ԻՆ

SPECIAL SERVICE FOR
HAMASDEGH ARMENIAN SCHOOL, 9:30 a.m.

Ս. Պատարագ Առ. Ժամը 10:30-ին հեռարձակում
Divine Liturgy 10:30 A.M. Live Streamed

Soorp Khatch Armenian Apostolic Church
4906 Flint Drive, Bethesda, MD 20816
Office Hours: 10:00 a.m. - 2:00 p.m.
Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393
E-mail: soorpkhatch@verizon.net
Web Page: www.soorpkhatch.org
Rev. Fr. Sarkis Aktavoukian, Pastor
Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

All Sick



Parishioners

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ**

----- (4 . 3 - 18) -----

Նոյնն է մեր ալ պարագան: Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ զրկեց իր Որդին, որ կնոջմէ մը ծնաւ եւ Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ Օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ զրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Աբբա», այսինքն «Հայր» կը կոչենք: Ուստի այլեւս ծառայ չէք, այլ՝ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:

Ճիշդ է որ նախապէս երբ զԱստուած չէիք ճանչնար, շաստուածներու կը ծառայէիք: Բայց հիմա որ զԱստուած ճանչցաք եւ մանաւանդ Աստուած ալ ձեզ ճանչցաւ, ի՞նչպէս կրկին կը վերադառնաք բնութեան տկար ու խեղճ ոյժերու պաշտամունքին եւ վերստին կ'ուզէք անոնց ծառայել. յատուկ կարեւորութիւն կու տաք որոշ օրերու եւ ամիսներու, որոշ ժամանակներու կամ տարիներու: Կը վախնամ որ ձեզի համար տարած ամբողջ աշխատանքս զուր անցած ըլլայ:

Կը խնդրեմ, եղբայրներ, ինծի պէս եղէք, քանի ես ալ ժամանակ մը ձեզի պէս էի:

Ձեզի դէմ բնաւ գանգատ մը չունիմ: Ընդհակառակը. հարկաւ գիտէք թէ սկիզբը, երբ Աւետարանը ձեզի քարոզելու եկայ, տկար էի մարմնով. եւ հակառակ անոր որ հիւանդ վիճակով փորձանք եղայ ձեզի, շանարգեցիք զիս, ո՛չ ալ արհամարհեցիք. այլ զիս ընդունեցիք այնպէս՝ ինչպէս Աստուծոյ հրեշտակը կամ Քրիստոս Յիսուսը պիտի ընդունէիք. եւ ուրախութեամբ ըրիք ատիկա: Հիմա ի՞նչ պատահեցաւ: Կրնամ վկայել ձեզի համար, որ եթէ կարելի ըլլար՝ ձեր աչքերը կը հանէիք եւ կու տայիք ինծի: Միթէ ճշմարիտը խօսած ըլլալուս համար թշնամի՞ եղայ ձեզի: Մի՛ կարծէք թէ ձեզի հանդէպ մասնաւոր հետաքրքրութիւն ցուցաբերող այդ մարդիկը ձեր բարիքը կը խորհին: Ո՛չ: Անոնք կ'ուզեն ձեզ ինձմէ բաժնել, որպէսզի ամբողջութեամբ իրենց հետեւիք: Բայց երանի տե՛ւաբար բարիին նախանձախնդիր ըլլայիք, եւ ո՛չ միայն երբ որ ես ձեր մէջ ներկայ եմ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

----- (4 . 14 - 23) -----

Յիսուս Գալիլեա վերադարձաւ Սուրբ Հոգիին զօրութեամբ, եւ ամբողջ գաւառին մէջ իր համբաւը տարածուեցաւ: Անոնց ժողովարաններուն մէջ կ'ուսուցանէր՝ արժանանալով բոլորին հիացումին ու գովասանքին:

Եկաւ Նազարէթ քաղաքը, ուր մեծցած էր, եւ իր սովորութեան համաձայն Շաբաթ օր ժողովարան գնաց: Երբ ոտքի ելաւ կարդալու համար օրուան ընթերցուածը, իրեն տուին Նսայի մարգարէին գիրքը: Բացաւ եւ գտաւ այն տեղը ուր կ'ըսէր.՝

«Տիրոջ Հոգին վրաս է,
որովհետեւ զիս օծեց եւ զրկեց՝
աղքատներուն փրկութեան աւետիս տալու,
սրտաբեկները մխիթարելու,
գերիներուն ազատութիւն բերելու,
կոյրերուն աչքերը բանալու,
հարստահարուածները ազատելու
եւ յայտարարելու՝ թէ ահա հասած է ժամանակը,
երբ Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը»:

Ապա գոցեց գիրքը, տուաւ պաշտօնեային եւ նստաւ: Ժողովարանին մէջ գտնուողներուն բոլորին աչքերը իրեն սեւեռած էին, երբ ըսաւ.

– Այս մարգարէութիւնը որ դուք լսեցիք, ահա այսօր իրականացաւ:

Ամէնքն ալ տպաւորուած էին իրմէ եւ հիանալով անոր շնորհալի խօսքերուն վրայ՝ կ'ըսէին.

– Այս մարդը Յովսէփի որդին չէ՞:

Յիսուս ըսաւ.

– Անկասկած ինծի պիտի ըսէք հետեւեալ առածը. «Բժի՛շկ, դուն քեզ բժշկէ»: Եւ ինչ որ լսեցինք որ գործեր ես կափառնաուամի մէջ, այստեղ՝ քու հայրենի գաւառիդ մէջ ալ կատարէ:



SCRIPTURE READINGS



GALATIANS 4:3-18

So with us; while we were minors, we were enslaved to the elemental spirits of the world. But when the fullness of time had come, God sent his Son, born of a woman, born under the law, in order to redeem those who were under the law, so that we might receive adoption as children. And because you are children, God has sent the Spirit of his Son into our hearts, crying, “Abba! Father!” So you are no longer a slave but a child, and if a child then also an heir, through God.

Formerly, when you did not know God, you were enslaved to beings that by nature are not gods. Now, however, that you have come to know God, how can you turn back again to the weak and beggarly elemental spirits? How can you want to be enslaved to them again? You are observing special days, and months, and seasons, and years. I am afraid that my work for you may have been wasted.

Friends, I beg you, become as I am, for I also have become as you are. You have done me no wrong. You know that it was because of a physical infirmity that I first announced the gospel to you; though my condition put you to the test, you did not scorn or despise me, but welcomed me as an angel of God, as Christ Jesus. What has become of the goodwill you felt? For I testify that, had it been possible, you would have torn out your eyes and given them to me. Have I now become your enemy by telling you the truth? They make much of you, but for no good purpose; they want to exclude you, so that you may make much of them. It is good to be made much of for a good purpose at all times, and not only when I am present with you.



SCRIPTURE READINGS



LUKE 4:14-23

Then Jesus filled with the power of the Spirit, returned to Galilee, and a report about him spread through all the surrounding country. He began to teach in their synagogues and was praised by everyone. When he came to Nazareth, where he had been brought up, he went to the synagogue on the Sabbath day, as was his custom. He stood up to read, and the scroll of the prophet Isaiah was given to him. He unrolled the scroll and found the place where it was written: “The Spirit of the Lord is upon me, because he has anointed me to bring good news to the poor. He has sent me to proclaim release to the captives and recovery of sight to the blind, to let the oppressed go free, to proclaim the year of the Lord’s favor.”

And he rolled up the scroll, gave it back to the attendant, and sat down. The eyes of all in the synagogue were fixed on him. Then he began to say to them, “Today this scripture has been fulfilled in your hearing.” All spoke well of him and were amazed at the gracious words that came from his mouth. They said, “Is not this Joseph’s son?” He said to them, “Doubtless you will quote to me this proverb, ‘Doctor, cure yourself!’ And you will say, ‘Do here also in your hometown the things that we have heard you did at Capernaum.’”



2020 & 2021 Membership Dues – Parishioners who have not paid their 2020 Annual Membership dues are encouraged to remit payment. 2021 Membership Dues are also acceptable now. The membership fees are \$150.00 per adult and \$50.00 for each full time student, ages 18-26. These dues are 100 percent tax deductible.

Հ Բ Ե Շ Տ Ա Կ Ն Ե Բ

Հրեշտակ կը նշանակէ պատգամաւոր, սուրհանդակ, նախակարապետ կամ երկնային դեսպան: Աստուածաշունչը կը վկայէ, որ հրեշտակները ստեղծուած են առաջին օրը՝ լոյսին հետ միասին:

Ըլլալով անդրանցական տարածքի բնակիչներ, հրեշտակները գերծ են ժամանակի ներգործութենէն եւ չունին սեռական յատկանիշ: Անոնք կը ներկայացնեն Աստուծոյ երկնային զօրքերը, որոնք ունին իրենց զօրագլուխ-ղեկավարները՝ Գարրիէլ, Միքայէլ, Ռաֆայէլ, Անայէլ, Ուրիէլ, Ադոնիէլ, Փանուէլ, Բարաքիէլ, Երեմիէլ, Սաղաթէլ եւ այլ առաջնորդ հրեշտակապետներ:

Հին Կտակարանին մէջ, անոնք հանդէս կու գան որպէս Աստուծոյ ներկայացուցիչներ, միջնորդներ՝ հոգեւոր եւ նիւթական աշխարհներու միջեւ. եւ այս հանգամանքը իր նորորակ դրսեւորումը կը գտնէ Յիսուս Քրիստոսի անձին մէջ: Իբրեւ այդպիսին անոնք ներկայ են արդէն Հին Կտակարանին մէջ՝ իբրեւ «Տիրոջ հրեշտակ» կամ «Աստուծոյ հրեշտակ» անունով:

Համաձայն Հայ Եկեղեցւոյ հրեշտակաբանութեան, Հրեշտակները «անմարմին գոյացութիւններ են, իմացական, անձնիշխան, մշտաշարժ, անմահ եւ սպասաւոր Աստուծոյ»:

Հրեշտակները, երկինքի մէջ անընդհատ կը փառաբանեն զԱստուած: Սակայն անոնց մէկ մասը չարաշահելով իրեն վերապահուած ինքնիշխանութիւնը, ապստամբեցաւ Աստուծոյ դէմ եւ դարձաւ չար հրեշտակ կամ սատանայ, դեւ: «... Աստուած մեղանշած հրեշտակներուն իսկ չխնայեց, այլ՝ զանոնք տարտարոս նետել տուաւ, ուր խաւարին կապանքներով կապուած՝ կը պահուին մինչեւ դատաստանի օրը» (Բ Պետրոս 2:2-4):

ANGELS

An angel appoints a deputy, messenger, forerunner, or heavenly ambassador. The Bible testifies that angels were created on the first day along with light.

Being inhabitants of the transcendental area, the angels are free from the influence of time and have no sexual characteristics. They represent God's heavenly armies, led by Gabriel, Michael, Raphael, Haniel, Uriel, Adonai, Remiel, Raguel, Jeremiah, Chamuel, and other leading archangels.

In the Old Testament, they act as God's representatives, mediators between the spiritual and material worlds. and this circumstance finds its new manifestation in the person of Jesus Christ. As such, they are already present in the Old Testament as the "angel of the Lord" or "the angel of God."

According to the archeology of the Armenian Church, Angels are "incorporeal beings, knowledgeable, sovereign, everlasting, immortal and serving God."

The angels in heaven constantly glorify God. However, some of them, abusing their reserved sovereignty, rebelled against God and became an evil angel or Satan, a demon. (Peter 2: 2-4).



NEW MONTGOMERY COUNTY MASK REQUIREMENT

Pursuant to the Board of Health Regulations approved on August 5, 2021, Montgomery County's COVID-19 transmission status has been downgraded to an area of "substantial transmission." Effective August 7, 2021 at 12:01 AM, all persons in Montgomery County over the age of two must wear a face covering in any location accessible to the public (subject to exceptions as described in paragraph 3(b) of the Regulation).

Based on this mandate, wearing a facial mask will be mandatory while on the church property. All affiliated organizations must comply with this new requirement while scheduling meetings in-person or attending other organizational functions on-site.